ԷՄՄԱ ԳԱԼՍՏՅԱՆ

ԼԵԶՎԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ԱՐԴԵՆ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

Թեև քաղաքականության լեզվի վերաբերյալ բավականին աշխատություններ կան, սակայն ոչ բոլորում են լեզվաբանները անդրադառնում լեզվի քաղաքական գործառույթին՝ արդեն որպես առանձին գործառույթի:

Ե.Ի. Շեյգալը իր «Քաղաքական խոսույթի նշանագիտությունը» /1/ գրքում առաջարկում է ոչ թե լեզվի մեկ, այլ մի քանի քաղաքական գործառույթներ: Ըստ նրա՝ յուրաքանչյուր խոսույթի գործառույթները դուրս բերելիս պետք է հաշվի առնել երկու գործոն.

1. Ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունված լեզվի գործառույթների համակարգը (Կ. Բյուլեր, Ռ. Յակոբսոն),

2. Տվյալ խոսույթի նպատակը:

Առաջին գործոնի կարևորությունը կայանում է նրանում, որ լեզվի հիմքային գործառույթները այս կամ այն չափով առկա են լեզվի յուրաքանչյուր օգտագործման ժամանակ, և անհրաժեշտ է որոշել, թե վեց հիմքային գործառույթներից որին է հակված տվյալ խոսույթը: Կոնկրետ քաղաքական խոսույթի համար Ե.Ի. Շեյգալը առանձնացնում է կոնատիվ գործառույթը, ընդ որում նա նախընտրում է օգտագործել «կարգավորող գործառույթ» (регулятивная функция) տերմինը, քանի որ «այն ընդգրկում է լեզվի դերը հասցեատիրոջ վարքի կարգավորման մեջ» /1; 33/, և վերաբերական գործառույթը, որը միախառնվում է մոգական գործառույթի հետ, քանի որ քաղաքական խոսույթում քաղաքական իրականությունը կառուցվում է:

Ինչ վերաբերում է երկրորդ գործոնին, ապա Ե.Ի. Շեյգալը գտնում է, որ քաղաքական խոսույթի նպատակն է հանդես գալ որպես քաղաքական իշխանության գործիք, իսկ քաղաքական իշխանություն ասելով նա նկատի ունի իշխանության համար պայքարը, իշխանության տիրացումը, պահպանումը, իրականացումը, կարգավորումը և դասակարգումը: Այս նպատակին հասնելը նա համարում է քաղաքական խոսույթի գլխավոր գործառույթը, որը, սակայն, իրականացվում է հետևյալ հինգ քաղաքական գործառույթների միջոցով.

1. Քաղաքականության կուսակցական անդամների միավորման ու տարբերակման գործառույթները,

2. Թշնամության և ներդաշնակության (կոնֆլիկտ և համաձայնեցում) գործառույթները,

3. Գործունեություն իրականացնելու և տեղեկատվական գործառույթները, այսինքն՝ քաղաքական գործիչների կողմից քաղաքական գործունեության իրականացումն ու դրանց մասին տեղեկացնելը,

4. Մեկնաբանման և կողմնորոշման գործառույթները, այսինքն՝ քաղաքական դաշտի լեզվական իրականության ստեղծումը և տվյալ իրականության մեջ գոյության պահպանումը,

5. Ղեկավարող և դրդիչ (побудительная) գործառույթները, այսինքն՝ հասարակության գիտակցության մանիպուլյացիան և գործունեության մղումը:

Թեև Ե.Ի. Շեյգալը ճիշտ է նկատել քաղաքական խոսույթի առանձնահատկությունները, սակայն գործառույթները դուրս բերելիս նա հիմք է ընդունել էմպիրիկ մոտեցումը, այսինքն՝ սահմանում է դրանք՝ ելնելով քաղաքական տարբեր իրավիճակներում լեզվի կիրառությունից:

Դ. Գրեյբերը /2/ նույնպես առանձնացնում է ոչ թե լեզվի մեկ, այլ մի քանի քաղաքական գործառույթներ.

1. Տեղեկատվության տարածման գործառույթը, այսինքն՝ տեղեկացնել այն, ինչ տեղի է ունենում քաղաքական հանրությունում, ընդ որում տվյալ տեղեկատվությունը կարող է հանդես գալ հարցազրույցների, պրես-կոնֆերանսների, ոչ պաշտոնական այլ զրույցների տեսքով: Այս տեղեկատվությունների առանձնահատկությունն այն է, որ բացի էմպլիցիտ տեղեկատվությունից, տրվում է նաև իմպլիցիտ տեղեկատվություն:

2. Օրակարգի հաստատման (agenda setting) գործառույթը, այսինքն՝ քաղաքական գործիչները որոշում են, թե որ թեմաների վրա պետք է բևեռել հանրության ուշադրությունը, և որոնք պետք է մնան ստվերում, ընդ որում, այն թեմաները, որոնք արժանանում են հանրության ուշադրությանը, որոշում են նաև տվյալ հանրության գործունեության տիպը:

3. Ապագայի և անցյալի մեջ պրոյեկտումը, այսինքն՝ քաղաքական խոսույթը ուղղված է ապագան կանխատեսելուն և անցյալը վերաստեղծելուն:

Եթե Ե.Ի. Շեյգալը անդրադառնում է լեզվի հիմնական գործառույթների համակարգին և փորձում է որոշել, թե դրանցից որին է հակված քաղաքական խոսույթը, ապա Դ. Գրեյբերը ընդհանրապես չի անդրադառնում դրանց և նորից տալիս է լեզվի քաղաքական գործառույթների էմպիրիկ սահմանում:

Վ. Զ. Դեմյանկովը իր «Քաղաքական խոսույթը որպես քաղաքագիտական բանասիրության առարկա» /3/ հոդվածում նախ առաջարկում է, որ քաղաքական խոսույթը դիտարկվի երեք տեսանկյունից.

1. Բանասիրական, ինչպես յուրաքանչյուր տեքստ, որը կուսումնասիրի քաղաքագիտական բանասիրությունը,

2. Սոցիալ-հոգեբանական, երբ պետք է որոշել հասցեագրողի քաղաքական նպատակներին հասնելու արդյունավետությունը, որը կուսումնասիրի քաղաքագիտական գրականագիտությունը,

3. Անհատահերմենևտիկական, երբ որոշակի պայմաններում պետք է վեր հանել հասցեագրողի կամ մեկնաբանի անձնական իմաստները, որը կուսումնասիրի քաղաքագիտական լեզվաբանությունը:

Միայն տվյալ երեք դիսցիպլինների միավորման արդյունքում հնարավոր կլինի ամբողջապես վերլուծել քաղաքական խոսույթը: Իսկ քաղաքական խոսույթի հիմնական նպատակը, գործառույթը նա բնորոշում է հետևյալ ձևով. «Քաղաքական խոսույթի հասարակական առաքելությունը կայանում է հասցեատերերի մոտ «քաղաքականորեն ճիշտ» գործողությունների և գնահատականների անհրաժեշտությունը ներշնչելու մեջ: Այլ կերպ ասած՝ քաղաքական խոսույթի նպատակը ոչ թե նկարագրելն է, այլ հասցեատերերին համոզելը, նրանց մոտ մտադրություն ստեղծելը և գործունեության մղելը» /Նույն տեղում; 38/:

Եթե փորձենք որոշել, թե Վ. Ջ. Դեմյանկովի նշած քաղաքական խոսույթի նպատակը լեզվի հիմնական գործառույթներից որին է համապատասխանում, ապա կտեսնենք, որ դա «դու» դերանվանը համապատասխանող գործառույթն է՝ կոնատիվը: Սակայն միայն կոնատիվ գործառույթի հաշվի առնելը ոչինչ չի ասում քաղաքական խոսույթի առանձնահատկությունների մասին:

Երբեմն լեզվաբանները չափազանց լայն են ընկալում «քաղաքական» տերմինը, օրինակ՝ Ջ. Փ. Ջիին /4/ գտնում է, որ լեզվի յուրաքանչյուր օգտագործում քաղաքական է, քանի որ այն օգտագործողը դրա միջոցով տալիս է իր պատկերացումը, թե ինչպես են հասարակական բարիքները բաշխված կամ ինչպես պետք է բաշխված լինեն: Իսկ հասարակական բարիքներ ասելով նա նկատի ունի այն ամենը, ինչ որևէ մարդկային խումբ հավատում է, որ իշխանության, կարգավիճակի կամ արժեքի աղբյուր է՝ լինի այն դրամ, սեփականություն, խոսքային կարողություն, տեսակետներ, կարծիքներ, գիտելիքներ, բարոյականություն, հեղինակություն, և այլն. «Երբ մենք գրում կամ խոսում ենք, մենք միշտ ինչ-որ հեռանկար, պատկերացում ենք կազմում, թե ինչպիսին է աշխարհը կամ ինչպիսին պետք է լինի, այսինքն պատկերացնում ենք, թե ինչն է նորմալ, ինչը՝ ոչ, ինչն է ընդունելի, ինչը՝ ոչ, ինչն է ճիշտ, ինչը՝ ոչ, ինչպիսին է իրադրությունը, ինչպիսին չէ, ինչպիսին

պետք է լինի այն, ինչպիսին չպետք է լինի, ինչ մարդիկ կուզենային, որ մենք կամ նրանք անեն, ինչ չէին ուզենա, և այլն, և այլն: Այսպիսով, քաղաքականությունը լեզվի օգտագործման անբաժան մասն է, այն իր գոյությունը ստանում է լեզվում, քանի որ լեզվում են ստեղծվում, պահպանվում, բաշխվում ու վերաբաշխվում հասարակական բարիքները» /4;2/: Այսինքն՝ Ջ. Փ. Ջիին լեզվի հաղորդակցական գործառույթը հանգեցնում է քաղաքական գործառույթի, որը սակայն արդարացված չէ, քանի որ ոչ բոլոր հաղորդակցություններն են քաղաքական բնույթ կրում:

Վերը նշված բոլոր լեզվաբանները այսպես թե այնպես անդրադառնում են այն հարցին, թե ժամանակակից լեզվաբանության մեջ ընդունված լեզվի գործառույթների համակարգից որին է համապատասխանում լեզվի քաղաքական գործառույթը, սակայն նրանցից ոչ ոք չի փորձում լեզվի քաղաքական գործառույթը դուրս բերել այնպես, ինչպես այդ գործառույթների համակարգը առաջարկողները (Կ.Բյուլեր, Ռ. Յակոբսոն), այսինքն՝ հիմք ընդունելով լեզվի կառուցվածքն ու համակարգը:

Այսպես, Կ. Բյուլերը հիմք է ընդունում անձնական դերանունների համակարգը՝ համապատասխանորեն դուրս բերելով երեք գործառույթ.

1. Արտահայտման (ես)
2. Դիմումի (դու)
3. Հաղորդման (նա)



Հետագայում Ռ. Յակոբսոնը զարգացնելով Կ. Բյուլերի այս մոդելը՝ առաջարկում է վեց գործառույթ՝ հիմք ընդունելով հաղորդակցման տեսության վեց գործոնները.

1. Հասցեագրող (ես)՝ էմոտիվ գործառույթ,
2. Հասցեատեր (դու)՝ կոնատիվ գործառույթ
3. Համատեքստ (նա)՝ այն իրադրությունը, որին վերաբերում է խոսքը,
4. Հաղորդում (նա)՝այն, ինչ հաղորդվել է՝ խոսքը,
5. Կոդ՝ այն նշանների համակարգը, որն օգտագործվում է հաղորդման նպատակով՝ մետալեզվական գործառույթ.

6. Հասցեագրողի և հասցեատիրոջ միջև շփման միջավայրը՝ այն նյութական շերտը,

որով հաղորդվում է խոսքը, ինչպես նաև առաջացող հոգեկան կապը՝ շփման գործառույթ:



Ռ.Յակոբսոնը նշում է, որ տվյալ մոդելը իրենից ներկայացնում է լեզվի հիմքային գործառույթների համակարգը, որից, սակայն, կարելի է երկրորդական գործառույթներ դուրս բերել, և ինքը տվյալ դեպքում դուրս է բերում մոգական գործառույթը, որը նա բնութագրում է որպես հասցեատիրոջ մասնատում. «Սա կարծես թե բացակայող կամ անշունչ երրորդ դեմքի փոխակերպումն է որպես կոնատիվ հաղորդման հասցեատիրոջ» /6; 200/:

Ս.Տ. Զոլյանը գտնում է, որ նման սկզբունքներով, այսինքն՝ Ռ.Յակոբսոնի առաջարկած մոդելը դիտարկելով որպես սերող համակարգ, կարելի նաև երրորդ կարգի գործառույթ դուրս բերել, երբ բացակայող կամ անշունչ երրորդ դեմքը փոխակերպվի ոչ միայն հաղորդման հասցեատիրոջ, այլև հասցեագրողի. «Այդպիսի օրինակներ են այն տեքստերը, որտեղ իշխանությունն ու իր ինստիտուտները արտահայտում են իրենք իրենց՝ «Մենք՝ ժողովուրդը», «Մենք՝ ՄԱԿ-ը»: Նման արտահայտությունները կենտրոնանում են իրական հասցեագրողների դեանձնավորման վրա, իշխանությունը ձգտում է ինքն իրեն արտահայտել կիսաշնչավոր սուբյեկտի մեջ: Այս գործառույթի վրա կարող է կենտրոնանալ արդեն երրորդ կարգի՝ բռնատիրական /узурпирующая/ գործառույթը, երբ շնչավոր հասցեագրողը խոսում է անշունչ հրեշի /левиафан/ անունից: Քաղաքական գործողության և ծիսակատարության կապը արտացոլվում է որպես մոգական գործառույթը հրեշայինինի փոխակերպվելու հնարավորություն: Ինչպես տեսնում ենք տվյալ դեպքում նույնպես հնարավոր է

հասցեատիրոջ/հասցեագրողի մասնատում՝ առանց որևէ բանաստեղծական էֆֆեկտի» /7; 644-645/: Այդ մասնատումը կամ լեզվի քաղաքական գործառույթի կառուցվածքը գրաֆիկորեն կարելի է ներկայացնել հետևյալ ձևով.

Ես

Նշանակյալ	Նշանակիչ Դու		
	Նշանակյալ	Նշանակիչ Նա	
		Նշանակյալ	Նշանակիչ

Այսպիսով, մենք գտնում ենք, որ լեզվի քաղաքական գործառույթի՝ մեր կողմից առաջարկած մոդելը ավելի կատարելագործված է, քանի որ դուրս է բերված ըստ լեզվի կառուցվածքի և համակարգի:

Գրականության ցանկ

1. Шейгал Е.И. ''Семиотика политического дискурса.'' М., 2004.
2. Graber D., ''Political Languages". // Handbook of Political Communication. Beverly Hills , London: Sage Publication, 1981, p. 195-224.
3. Демьянков В.З., ''Политический дискурс как предмет политологической филологии.'' // Политическая наука. Политический дискурс: История и современные исследования. М.: ИНИОН РАН, 2002, N3, стр. 32-43.
4. Gee P.J. ''An Introduction to Discourse Analysis. Theory and Method.'' London and New York, 1999.
5. Бюлер К. "Теория языка (извлечения).'' // Звегинцев В.А. "История языкознания 19-20 веков в очерках и извлечениях", М., 1965, ч.2 , стр. 22-37.
6. Якобсон Р.О. "Лингвистика и поэтика." // Структурализм §за¦ и §против¦, М., 1975, стр. 193-230.
7. Золян С.Т. "Языковые функции: возможные расширения модели Р. Якобсона." // в Р. Якобсон, "Тексты, документы, исследования." РГГУ, 1999, стр. 638-647.